https://doi.org/10.46991/hc.2023.19.1.238

The Image of a Siren in Armenian Miniature Painting

Anahit Aperyan
https://orcid.org/0000-0001-5801-0322
Mother Armenia military museum, guide
anahit_aperyan@mail.ru

Keywords: *Gospel, Armenian miniature, mythical creature, siren, devil, harbinger, ornament*

Medieval miniaturists did not create random figures to illustrate manuscripts. Each of them had their own role and interpretation, and among those characters are also the sirens, about which there are few studies. In our work we studied 45 sirens images (in shrines, headdresses, lordly scenes) and after analyzing a few of them we came to the following conclusions: In the pre-Christian period, sirens with the meaning of demons, monsters, evil spirits, which are mentioned in mythological legends, acquire a completely new meaning in the Christian period. Sirens were known for their sweet and enchanting sound. It is likely that if before the adoption of Christianity they used their enchanting voice to capture and kill people, then in the Christian period they announced Christian events with their enchanting voice. Many examples testify to that. In the Christian period, sirens announced the coming of Christ and opened the way for people to the Christian faith. So we can say that sirens are revealed as demons possessed by evil spirits in the pre-Christian period, which in the Middle Ages become harbingers of Christian realities.

Հուշկապարիկի կերպարը հայ մանրանկարչության մեջ

Անահիտ Ապերյան
«Մայր Հայաստան» ռազմական պատմության թանգարան, էքսկուրսավար

Հիմնաբառեր՝ Ավետարան, հայկական մանրանկարչություն, առասպելական էակ, սիրեն, հրեշ, ավետաբեր, զարդանախշ:

Միջնադարյան մանրանկարիչները պատահական կերպարներ չեն ստեղծել ձեռագրերը նկարազարդելու համար. նրանցից յուրաքանչյուրն ունեցել է պատկերման իր յուրօրինակ

History and Culture. Journal of Armenian Studies, Vol.-1(19), 2023, pp. 238-260

Received: 09.12.2022
Revised: 22.12.2022
Accepted: 15.06.2023

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2023

մոտեցումը: Այդ պատկերված կերպարներից յուրաքանչյուրն ուներ իր ուրույն դերն ու մեկնաբանությունը, և այդ կերպարների թվին են դասվում նաև հուշկապարիկ-սիրենները, որոնց մասին ուսումնասիրությունները սակավ են: Մեր աշխատանքում ուսումնասիրել ենք 45 հուշկապարիկի պատկեր (խորաններում, գլխազարդերում, լուսանցազարդերում, տերունական տեսարաններում) և դրանցից մի քանիսը վերլուծելուց հետո հանգել ենք հետևյալ եզրակացություններին: Նախաքրիստոնեական ժամանակաշրջանում բոլորովին նոր նշանակություն են ձեռք բերել դևերի, հրեշների, չար ոգիների նշանակություն ունեցող հուշկապարիկները, որոնք հիշատակվում են դիցաբանական լեգենդներում: Հուշկապարիկները հայտնի էին իրենց քաղցր ու դյութիչ ձայնով: Հավանական է, որ եթե մինչ քրիստոնեության ընդունումը նրանք օգտագործում էին իրենց դյութիչ ձայնը մարդկանց բռնելու և սպանելու համար, ապա՝ քրիստոնեական շրջանում, նրանք իրենց դյութիչ ձայնով ազդարարում էին քրիստոնեական իրադարձությունների մասին: Դրա մասին են վկայում բազմաթիվ մանրանկարչական և այլ օրինակներ: Քրիստոնեական ժամանակաշրջանում սիրենները ազդարարում էին Քրիստոսի գալուստը և մարդկանց համար ճանապարհ բացում դեպի քրիստոնեական հավատքը: Այսպիսով՝ մենք կարող ենք ասել, որ վերջիններս բացահայտվում են որպես չար ոգիներ, դևեր նախաքրիստոնեական շրջանում, իսկ միջնադարում դառնում են քրիստոնեական իրողությունների ավետաբեր:

Образ сирина в армянской миниатюрной живописи

Анаит Аперян
Музей военной истории "Мать Армения", Гид

Ключевые слова՝ Евангелие, армянскаяминиатюра, мифическое существо, сирена, чудовище, предвестник, орнамент.

Средневековые миниатюристы не создавали случайных фигур для иллюстрации рукописей. У каждого из них была своя роль и интерпретация, и среди этих персонажей есть и сирены, о которых мало исследований. В нашей работе мы изучили 45 изображения сирен (в святилищах, головных уборах, барских сценах) и, проанализировав несколько из них пришли к следующим выводам: В дохристианский период сирены со значением демонов, чудовищ, злых духов, которые упоминаются в мифологических легендах, в христианский период приобретают совершенно новое значение. Сирены были известны своим сладким и чарующим голосом. Вполне вероятно, что если до принятия христианства они использовали свой чарующий голос для захвата и убийства людей, то в христианский период они возвещали своим чарующим голосом христианские события. Об этом свидетельствуют многие примеры. В христианский период сирены возвещали приход Христа и открывали людям путь к христианской вере. Итак, мы можем сказать, что сирены раскрываются как демоны, одержимые

нечистью в дохристианский период, которые в Средние века становятся предвестниками христианских реалий.

* * *

Ներածություն: Միջնադարյան մանրանկարիչները պատահական կերպարներ չէին ստեղծում՝ ձեռագրերը նկարազարդելու համար: Նրանք մեծ չափերով ձեռագրերի զարդանկարային հորինվածքում ներառում էին առասպելական էակների, որոնք մասամբ հին, արդեն մեռած, պաշտամունքների՝ արեգակի, ջրի, մեռնող և հարություն առնող աստծո, բերրիության, կենաց ծառի արտացոլումն էին: Այդ առասպելական էակների թվին են դասվում նաև հուշկապարիկները: Զարգացած միջնադարի հայ ձեռագրարվեստում հուշկապարիկների պատկերումը ստացել է նշանակալի դեր՝ դառնալով ձեռագիր մատյանների գեղարվեստական հարդարանքի կարևոր մանրամասն [Khandanian, 1978, 377-394]: «Հուշկապարիկ» (պարսկերեն՝ yušk) նշանակում է «էշ» և «պարիկ»՝ առասպելական ոգի: Եզնիկը հուշկապարիկը համեմատում է հունական nokentáuros-ի կամ իշացուլի հետ [Մալխասեանց, 1944, 1567]:

Ժամանակի ընթացքում այս կերպարները կատարելագործվել են գույների համադրության ու ոճավորման արդյունքում:

Ներկայացնենք հայ մանրանկարչական ձեռագրերի խորաններում, անվանաթերթերում, գլխազարդերում հանդիպող առասպելական էակ հանդիսացող հուշկապարիկներից մի քանիսը՝ ցույց տալու դրանց խորհրդաբանության փոփոխությունը:

Ձեռագիր №6288 [Հաղբատի ավետարան, 1211 թ., նկարազարդող՝ Մարգարե]: Խորանի հիմքի վրա՝ ձախ կողմում, կանաչ ծառ է պատկերված, որին ամբողջ երկարությամբ փաթաթված է վիշապ և սպառնում է ճյուղին կանգնած թռչնաձագերին: Դրանից վերև՝ խորանի քիվի վրա, մեկ ոտքի վրա կանգնած է փարթամ պոչով հուշկապարիկ՝ գլխին սրածայր գլխարկ: Վերջինս նայում է աջ: Վարսերը երկար են, մարմնի վրա կարող ենք տեսնել նախշազարդեր: Թևերն ու ոտքերը կարմիր գույնով են պատկերված, իսկ մարմինը՝ ոսկեգույնով: Հպարտ կեցվածքով է, բերանը՝ փակ (Պտկ. 1):

Հռոմկլայի ավետարանը (թիվ 69/151, 1244 թ., Կ. Պոլիս, գրիչ՝ Սերովբէ Ալիշան, ծաղկող՝ Կիրակոս Հռոմկլայեցի) գրված է Կոստանդին Ա կաթողիկոսի հրամանով 1229-1267 թթ. [«Հայկական մանրանկարչութիւն», 2000 թ., 9-10]: Հուշկապարիկի պատկերի հանդիպում ենք «Եվսեբիոսի նամակը Կարպիանոսին» էջում: Աշխարհի չորս կողմերը խորհրդանշող ճակատազարդում՝ մեդալիոնում, պատկերված է Եվսեբիոսը՝ մագաղաթը ձեռքին: Նրանից վերև՝ աջ ու ձախ անկյուններում, ներկայացված են թռչնի մարմնով և մարդու գլխով հուշկապարիկներ: Վերջիններս, դեմ դիմաց կանգնած, նայում են հակառակ ուղղություններով: Մարմինները արված են կարմիր գույնով, թևերն ու ոտքերը՝ կանաչ: Մանրանկարում սիրենները գլխաբոբիկ են, բերանները՝ բաց, այնպիսի տպավորություն է ստեղծել մանրանկարիչը, որ կարծես երգում են: Նշենք, որ մինչքրիստոնեական շրջանում հուշկապարիկ-սիրենները դյութիչ ձայնով իրենց մոտ էին կանչում և սպանում մարդկանց: Հավանական է, որ եթե քրիստոնեության ընդունումից առաջ սպանում էին մարդկանց, ապա՝ քրիստոնեական շրջանում, իրենց դյութիչ ձայնով ավետում էին քրիստոնեական իրողությունները: Հաջորդ մանրանկարչական օրինակների դիտարկումը կնպաստի մեկնաբանման իսկությունը (Պտկ. 2):

«Գիրք ձեռնադրութեանց» [թիվ 1657/440, 1248 թ., Կիլիկիա] Սիրարփի Տեր-Ներսիսյանն այս աշխատության ձեռագրի մանրանկարները համեմատում է 1239 թ. ստեղծված ասորական մանրանկարների հետ [Ճանաշեան Մեսրոպ, 1966, 60-61]։ Սիրենների պատկերների հանդիպում ենք ուղղանկյուն կիսախորաններից մեկում։ Մարդագլուխ թռչունները դեմ դիմաց են պատկերված, կանաչ մարմնով, վարդագույն կոնակներով ու կարմիր թագերով։ Կապույտ արմավենիների ու ոստազարդերի մեջ գտնվող էակները զարմանք արտահայտող դեմքերով նայում են վերև, նրանց բերանները փակ են։ Այստեղ նունպես մանրանկարիչը մարմնի ավարտվող հատվածից սկսել և պատկերել է բուսական զարդանախշեր (Պտկ. 3)։

Հռոմի ավետարան (թիվ 1374/90, 1254 թ.։ Գրիչ և ծաղկող՝ Հովհաննես քահանա, ստացող՝ Հակոբ աբեղա) [«Հայկական մանրանկարչութիւն», 2000 թ. հուլիս, 29]։ Հուշկապարիկների հանդիպում ենք Մարկոսի ավետարանի սկզբնաթերթում։ Սկզբնաթերթի կիսախորանի զարդարված Π-աձև գլխազարդի կարմիր խորքի վրա՝ երկու եզրերին, կապույտ, սպիտակ գծերով պատկերված են դեմ դիմաց կանգնած, հայացքները դեպի դիտողը հառած երկու սիրեններ։ Ի տարբերություն Հռոմկլայի ավետարանում հանդիպող հուշկապարիկների, որոնց բերանը բաց էր, այստեղ տեսնում ենք փակ բերաններով հուշկապարիկների, ինչպիսին կտեսնենք նաև Զեյթունի ավետարանում։ Ներկայացված են թագերով, դեմքի հանդարտությամբ։ Ոտքերից մանրանկարիչը նոր բուսական զարդանախշեր է պատկերել։ Սկզբնատառ Ս գլխագրի մեջ գրված է կրճատված վերնագիրը. «Սկիզբն աւետա բան Յի(Յիսուսի) Քի(Քրիստոսի), որպէս և գրեալէ ի մարգարէս. ահաւասիկ եւ առաքեմ զհրեշտակ իմ առաջն քո, որ հանդերձեսց է ըզճանապարհ քո, առաջի քո։ Ձայն բարբառոյ յանապատի։ Պատրաստ արէք զճանապարհ տեառն և ուղիղ արարէք զշաւիղ ըսնորա։ Եւ եղև զի յովհաննէս մկրտէր յանապա»։ Հետագա ուսումնասիրությունները ցույց կտան, որ հուշկապարիկի պատկերների հանդիպում ենք այն տեքստերի հարևանությամբ, որոնցում ասվում է. «Պատրաստ արեք տիրոջ ճանապարհը», որը ևս մեկ անգամ հավաստում է՝ քրիստոնեական շրջանում պատկերված հուշկապարիկ-սիրենները իրենց քաղցր ձայնով ավետում էին քրիստոնեական իրողություններ։ (Պտկ. 4)

Զեյթունի ավետարան (№ 10450, 1256 թ.։ Գրել ու նկարազարդել է Թորոս Ռոսլինը Կոստանդին Ա Բարձրբերդցու պատվերով) [«Հայկական մանրանկարչություն», 2014, 66]։ Հուշկապարիկի պատկերի հանդիպում ենք Եվսեբիոսի թղթում (էջ 3բ)։ Ուղղանկյուն գլխազարդում՝ լունետից վերև կիսաբոլոր շրջանակից դուրս՝ գլխազարդի երկու անկյուններում, պատկերված են երկու փոքրամարմին հուշկապարիկներ։ Վերջիններս, դեմ դիմաց լինելով, նայում են միմյանց։ Հետաքրքրական է, որ թռչնի թևերից զատ՝ տեսնում ենք մարդկային ձեռք, որն առասպելական կերպարը մոտեցրել է բերանին՝ մտածմունքի տպավորություն ստեղծելով, իսկ մյուս ձեռքով հավանաբար բռնել է ծաղիկ։ Մարմինները թանաքագույն են, իսկ թևերն ու ոտքերը՝ վարդագույն։ Սիրենները գլխաբոբիկ են, փոքր-ինչ երկար մազերով։ Կարծես կանգնած լինեն ճակատազարդի ներսի բոլորակի վրա։ Ավետարանում պատկերված հուշկապարիկի տեսակը մտածելու տեղիք է տալիս, քանի որ, եթե մինչ այս ուսումնասիրած մանրանկարներում տեսնում էինք թռչնի թևերով սիրենների, ապա այստեղ կան մարդկային ձեռքեր։ Հավանական է, որ մանրանկարիչը պատկերել է թատերական կերպարների։ Ինչպես արդեն նշել է Էմմա Պետրոսյանը, հուշկապարիկ-սիրենների

պատկերումը մանրանկարչության մեջ կարող է լինել թատերական մտածողության արգասիք (Պտկ. 5):

Կիլիկյան ձեռագիր՝ նկարազարդված Սմբատ Գունդստաբլի (1206-1276 թթ.) պատվերով (XIII դ. կեսեր)։ Ոսկերչական արվեստով ստեղծված ու ոսկով պատված զարդանախշերի մեջ պատկերված են բազմազան պատկերներ, որոնց մի մասը կապված է թատերական ու կրկեսային ներկայացումների հետ։ Խորաններից մեկում պատկերված են երկու հուշկապարիկներ, որոնց մեկ այլ իմաստ, ինչպես գիտենք, նրանց բնորոշում էր որպես թատրոնի ու կրկեսի մեջ հանդես եկողներ։ Ուստի չի բացառվում, որ այս ձեռագրում նրանց պատկերելը ևս կարող է առնչվել թատերական մտածողությանը։ Այդպիսի օրինակ մենք արդեն տեսանք Զեյթունի 1256 թ. ավետարանում։ Ձեռագրում՝ խորանի ճակատազարդում, ոսկեգույն խորքի վրա են պատկերված երկար պոչերով, թագապսակ սիրենները։ Այստեղ մանրանկարիչը մարմինը, ամբողջ դաշտը ոսկյա ֆոնի վրա լցրել է բուսական զարդանախշերով, որոնց մեջ ներգծել է երկու հուշկապարիկներին։ Սիրենների թագն ու մարմինը կարմիրով են արված, իսկ թևերը՝ կապույտ։ Նրանց բերանները բաց են, ինչպես տեսանք Հռոմկլայի ավետարանում և նայում են միմյանց, սակայն Հռոմկլայի ավետարանում նայում էին հակառակ ուղղություններով։ Այստեղ նույնպես բաց բերանով պատկերված հուշկապարիկները երգում են և այդպես ավետում քրիստոնեական նոր հավատքը (Պտկ. 6):

Օշին Մարաջախտի ավետարան (1274 թ., Սիս, գրիչ՝ Կոստանդին դպիր)։ Բազմաթիվ սկզբնատառեր պատկերված են տարբեր կերպարներից և դրանց համակցություններից՝ թռչուն ու օձ, թագավոր, մարդ ու օձ, մարդու գլխով երկու թռչնի մարմին ունեցող պատկերներ։ Կանոնների տախտակների գունագեղ ձևավորումը բնորոշ է ավելի ուշ կիլիկյան ավանդույթի մեծագույն գործերին, ինչպես իր շքեղությամբ, այնպես էլ իր նուրբ մանրամասնությամբ ու նորարարական պատկերներով [Mathews, 1994, 193-194]։ Հետաքրքիր է, որ Օշինի ավետարանում հուշկապարիկի պատկերի հանդիպում ենք նվիրաբերման էջում, որտեղ դիցաբանական կերպարը ներկայացված է մեկ գլխով ու երկու թռչնի մարմիններով։ Նրանց ոտքերը խաչված են։ Պատկերված է բուսական մոտիվներով հարդարված ճակատազարդում՝ ոսկե խորքի վրա, վեր նայելիս։ Գլխին ունի կարմիր թագ, որի վրա մանր, դեղին կետերով կարծես քարեր լինեն պատկերված։ Դեմքը հանդարտ է, բերանը փակ է պատկերված։ Այսպիսի սիրենի օրինակ, որը կանգնած լինի ճակատազարդի մեջտեղում և իր շուրջը համախմբի մանրանկարի մյուս գործող կերպարներին, մենք մինչ այս ուսումնասիրած ձեռագրերից և ոչ մեկում չենք հանդիպել։ Այստեղ՝ ոսկե խորքի վրա, գրված է նվիրաբերման տեքստը. «ՍԱՅ ՅԻՇԱՏԱԿ ԲԱՐԵԱՅ ԼԻՑԻ ԱՒՇԻՆՍ ՈՐԻՆ ԸՍՏԱՑՈՂԻ ԵՒ ԿՈՍՏԱՆ ԳԵԱ ԵՒ ՍՏԵՓԱՆԻ ԾՆՈՂԱՑՆ ՈՐԻՆ ՈՐ Ի ՅԵՐԿՆԻ ՆԱԵՒ ՈՐԴՈՅՆ ԻՒՐ ՅԱՆԿԱԼԻ ՆԱԽ ԿՈՍՏԱՆԴԵԱ ՄԵԾԻ ԻՇԽԱՆԻ ԱՅԼ ԵՒ ՀԵԹՄՈՅ ՊԱՏԱՆԵԿԻ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ՆՈՅԻՆ ՏՈՀՄԻ» (Համապատասխան բնագրին)։ Մինչ այս ուսումնասիրած ձեռագրերից և ոչ մեկում չենք հանդիպել հուշկապարիկների պատկերներ, որոնք նկարված լինեն նվիրաբերման էջում։ Առավել հետաքրքրական է այս առասպելական կերպարի երկու մարմնով հանդես գալը։ Թե ինչու է մանրանկարիչը պատկերել այդպես կարող ենք կատարել որոշ ենթադրություններ։ Շատ հավանական է, որ կապված լինի «Մի Քրիստոս յերկուս բնութիւնս» բանաձևի հետ, այսինքն՝ ընդունվում էր Քրիստոսի և՛ մարդ, և՛ Աստված լինելու գաղափարը, իսկ այս մանրանկարում տեսնում ենք երկու մարմնով և մեկ գլխով կերպարի։

Գրիգոր Տաթևացին իր «Գիրք հարցմանց» երկում գրում է. «Եւ դարձեալ «Քրիստոս» անունն էլ միաւորութիւն է նշանակում երկու բնութեան, ըստ որում Աստուածութիւնն օծեց մարդկութեանը, ինչպէս ասում են Աստուածաբանը եւ սուրբ Կիւրեղը» [Տաթևացի, 2020, 157]: Մենք արդեն նշեցինք, որ քրիստոնեական շրջանում և հատկապես մանրանկարչության մեջ հուշկապարիկների պատկերում էին այն տեքստերի հարևանությամբ, որոնք ավետում էին քրիստոնեական իրադարձություններ: Ուստի կարող ենք ասել, որ այստեղ մանրանկարիչը, պատկերելով երկու մարմիններ, նկատի է ունեցել մարդկային ու աստվածային էությունները, իսկ մարդկային գլուխը հավանաբար Քրիստոսն է, որ շարժում է այդ երկու ուժերին: Այս վարկածը, այդուհանդերձ, վիճահարույց է: Նշենք նաև, որ հուշկապարիկը պատկերված է թագով, ինչը հավանական է, որ կապված լինի ձեռագրի թագավորական ընտանիքին պատկանելու հետ (Պտկ. 7):

Ձեռագիր № 1746 (XIII դ., ենթադրաբար 1280 թ., գրիչ՝ Մխիթար դպիր (Երզնկացի՞): Ստացող՝ պրն. Յովհաննես [«Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի», հատոր Ա, 1970, 627]: Սիրենների պատկերներ տեսնում ենք Դավիթ Անհաղթի պատկերից վերև՝ ճակատազարդում՝ եզրագծված կարմիր գույնով: Նրանք թագակիր են, ամբողջությամբ ոսկեգույն՝ կապույտ խորքի վրա պատկերված: Ոսկին նշանակում է Տիրոջ անսուտ ու անապական խոսքերը այստեղ, ինչպես ասաց, թե երկինքն ու երկիրը կանցնեն, բայց խոսքերը չեն անցնի [Ղազարյան Վ., 2004, 89-91): Մխիթար դպիրը պատկերել է բավական փարթամ մարմնով, դեմքի լարվածությամբ, շքեղ թևերով սիրենների: Ոտքերը ծալված են: Գեղեցիկ զարդանախշերում դեմ դիմաց գտնվող սիրենները նայում են միմյանց, սակայն բերանները փակ են (Պտկ. 8):

Ձեռագիր № 9422 (XIII դարի 80-ական թթ., Կիլիկիա: Այս ձեռագրի հիշատակարանը կորած է, ծաղկողի անունն էլ անհայտ է): Մանրանկարները հագեցած են տարատեսակ կերպարներով, օրինակ՝ մեկ գլուխ և երկու մարմին ունեցող (bicorporate) արարածներով [Չուգասզյան Ս., 2014, 1]: Այս մատյանում հուշկապարիկ-սիրենների պատկերների հանդիպում ենք խորաններից մեկի ճակատազարդում, որին առանձնակի շքեղություն են հաղորդում ոսկյա պատկերի վրա արված բուսական զարդանախշերը, կենդանակերպ կերպարները: Ճակատազարդի վերևի աջ ու ձախ անկյուններում պատկերված են հուշկապարիկները: Նրանք դեմ դիմաց են, նայում են հակառակ ուղղություններով: Այդպիսի օրինակ արդեն տեսանք Հռոմկլայի ավետարանում: Այստեղ մանրանկարիչը վերջիններիս պատկերել է զվարթ դեմքերով: Ի տարբերություն մինչ այս ուսումնասիրած մանրանկարներում հանդիպող հուշկապարիկների պատկերների՝ այստեղ չափերով անհամեմատ ավելի փոքր են, իսկ ոտքերի փոխարեն պատկերված են բուսական զարդանախշեր: Մանրանկարիչը բերանները փակ է պատկերել, և նրանք ունեն գլխարկներ: Գլխարկներն ու թևերը կարմիր գույնով են արված, իսկ մարմինները՝ կապույտ (Պտկ. 9):

Ձեռագիր № 4820 Մ. (XIII-XIV դդ. ավետարան, ծաղկող, կազմող՝ Ովանէս: Ստացող՝ Սարգիս քահանա և կինը՝ Թամար): Հիշատակարանը չի պահպանվել, ընդօրինակման ժամանակի ու վայրի մասին ևս որոշակի տեղեկություններ չկան: Մատենադարանի համապատասխան քարտերում ու «Ցուցակ ձեռագրաց»-ում նշված են XIII-XIV դարերը: Մանրանկարների ոճական ընդհանուր առանձնահատկություններից ելնելով՝ ենթադրեցինք, որ ամենայն հավանականությամբ Վասպուրականի մանրանկարչության դպրոցի արգասիք են [Հակոբյան Հրավարդ, 1989, 135]:

Հուշկապարիկի պատկերի հանդիպում ենք Ավետարանի՝ Մատթեոսի անվանաթերթում (էջ 16ա)։ Բավական մեծ չափերով հուշկապարիկները պատկերված են մանրանկարի ճակատազարդում՝ բուսական զարդանախշերով պատված։ Թագակիր են, կանգնած են դեմ դիմաց՝ նայելով միմյանց։ Մարմիններն ամբողջությամբ թանաքագույն են, իսկ ոտքերը՝ մարմնագույն։ Կանգնած են հանդարտ, ունեն երկար պոչեր, նման են սիրամարգերի պոչերին, այդպիսի երկար պոչերով սիրենների օրինակ մենք արդեն տեսանք Սմբատ Գունդստաբլի պատվերով ստեղծված ավետարանի մանրանկարներից մեկում։ Բերանները փակ են, իսկ նրանց մեջտեղում փոքր չափերով վարդյակի պատկեր է երևում։ Ճակատազարդի ներքևի բացվածքում գրված է «Զթամար ստացողս յիշեա։ Աւետարան ըստ մաթէոս…»։ Իսկ ճակատազարդից ներքև հրեշտակի վերածված Գ տառն է, և գրված է. «Գիրք ծննդեան ՅԻ(Յիսուս) ՔԻ(Քրիստոսի) որդո Դաւթի…»։ Ավետարանում հուշկապարիկների պատկերումը տվյալ անվանաթերթում հավանաբար նպատակ է ունեցել ավետելու Քրիստոսի տոհմաբանությունը։ Այսպիսի տեքստի հարևանությամբ հուշկապարիկների պատկերներ կտեսնենք նաև հետագայում ուսումնասիրվող մանրանկարներում (Պտկ. 10)։

Ձեռագիր № 3722 (1304 թ., Նախիջևան, ծաղկող, կազմող՝ Սիմեոն, գրիչ՝ Յակոբ)։ Չորս ավետարանիչների պատկերներից բացի՝ տեսնում ենք նաև նկարազարդված բազմաթիվ լուսանցազարդեր, որոնց թեմաները հիմնականում կապված են հեթանոսության մնացուկների հետ, որոնք այդ շրջանում հավանաբար արդեն կորցրել էին իրենց իմաստը, բայց պահպանվել էին ժողովրդական արվեստում [Դուռնովո Լ. Ա., 1969, 208]։ Ղուկասի ավետարանի անվանաթերթի Պ-աձև գլխազարդում տեսնում ենք երկու հուշկապարիկներ, որոնք զարդարված են կանաչ ու կապույտ լուսապսակներով։ Լուսապսակով պատկերում էին սրբերին, իսկ այստեղ լուսապսակով են հանդես գալիս այն խառնածին էակները, որոնք, ինչպես նշվեց, այլ իմաստ ունեին մինչ քրիստոնեությունը, և նրանց համարվում էին չար ոգիներ, դևեր։ Նրանք պատկերված են փակ բերաններով, այտերի բնորոշ կարմրությամբ։ Կանգնած են դեմ դիմաց ու նայում են վերև։ Այդպիսի օրինակ տեսանք նաև Վենետիկի թիվ 1657/440 (XIII դար) ձեռագրում։ Դիտարկվող ավետարանում մարմինները ներկայացված են կապույտ գույնով, ոտքերը՝ կարմիր, իսկ թևերը՝ բազմագույն։ Ճակատազարդն աչքի է ընկնում վառ գույներով հարդարված բուսական զարդանախշերով (Պտկ. 11)։

1307 թ. «Եսայի Նչեցու ավետարան» (նկարիչ՝ Թորոս Տարոնացի, Սուրբ Ղազար վանքի մատենադարան, № 1917։ Այն պատրաստվել է, ինչպես ասված է հիշատակարանում, Գլաձորի համալսարանի ղեկավար Եսայի Նչեցու և նրա օգնական Դավթի համար)։ Թորոս Տարոնացին իր գործունեության այդ վաղ շրջանում դեռ հեռու էր կիլիկյան արվեստի ազդեցությունից, և այդ պատճառով նրա այս աշխատանքը բուն Հայաստանի արվեստի շունչն ունի [Ավետիսյան Ա. Ն., 1971, 87։ Եսայի Նչեցու ավետարանի մանրանկարներն աչքի են ընկնում մեծ գեղարվեստականությամբ և ներդաշնակորեն ընտրված գույների թարմությամբ [‘’Manuscripts armeniens illustres…’’, 110։

Ավետարանի երկու մանրանկարներում էլ հանդիպում ենք հուշկապարիկների պատկերների։ Մեկը պատկերված է ճակատազարդի ներսում, իսկ մյուսը՝ ճակատազարդից դուրս՝ քիվի վրա։ Ուղղանկյուն ճակատազարդի ներսում՝ ոսկե խորքի վրա, պատկերված են երկու երկար մազերով հուշկապարիկներ, որոնք նայում են տարբեր ուղղություններով՝ մարմինները շրջած իրար կողմ։ Բերանները փակ են, մարմիններն արված են կապույտ գույնով, թևերը՝ կարմիր, կանաչ, իսկ ոտքերը՝

վառ կարմիր։ Այս ձեռագրի մյուս մանրանկարի ճակատազարդից աջ տեսնում ենք հուշկապարիկի եզակի օրինակ։ Վերջինս ձախ ձեռքով բռնել է կարմրակտուց թռչնի երկու ոտքերից, իսկ մյուս ձեռքով նրա բերանին ինչ-որ բան է մոտեցնում։ Սիրենը ներկայացված է գլխարկով, որի վրա խաչի պատկեր կարող ենք տեսնել, այդպիսի օրինակ մենք արդեն տեսանք Հաղբատի ավետարանում և կտեսնենք նաև 1323 թ. Գլաձորում կրկին Թորոս Տարոնացու կողմից նկարազարդված ավետարանում։ Այստեղ հուշկապարիկը կանգնած է, մարմինն ու մարդկային ձեռքերը կապույտ գույնով են ներկված, թռչնի թևերը՝ վարդագույն, ոտքերը՝ կարմիր։ Ամբողջ կերպարը եզրագծված է ոսկեգույնով։ Մարդկային ձեռքով հուշկապարիկի մենք արդեն տեսանք Զեյթունի 1256 թ. ավետարանում։ Թորոս Տարոնացին իր գունավառ պատկերների, թռչունների շնորհիվ ձեռագրերին դրախտային գեղեցկություն է պարգևել։ Հետաքրքրված լինելով ժողովրդական ավանդապատումներով ու թարմ վերաիմաստավորումներով՝ մանրանակրիչը բազում առեղծվածային կերպարներ է պատկերում իր ձեռագրերում (Պտկ. 12, 13)։

Ձեռագիր № 1949 (1312 թ., Սարգիս Պիծակի ավետարան։ Նկարված է Սիսում)։ Մատթեոսի անվանաթերթում ենք հանդիպում սիրենների։ Ճակատազարդում՝ մուգ ֆոնի վրա են պատկերված։ Մարմինները կապույտ գույնով են արված, իսկ թևերը՝ կարմիր։ Կանգնած են դեմ դիմաց, նայում են իրար։ Մանրանկարի վնասված լինելու պատճառով բերանների հատվածը չի երևում, ուստի չենք կարող ասել փա՞կ, թե՞ բաց բերաններով են։ Ոտքերը չեն երևում, առավելապես բուսական զարդանախշեր են ներկայացված ոտքերի հատվածում։ Ճակատազարդից ներքև հրեշտակի տեսքով Գ տառն է պատկերված, ինչպես տեսանք № 4820 ձեռագրի նույն Մատթեոսի անվանաթերթում, և գրված է. «Գիրք ծննդեան ՅԻ(Յիսուս) ՔԻ(Քրիստոսի) որդու Դաւթի…»։ Ուստի այստեղ ևս կարող ենք ասել, որ հուշկապարիկներն ավետում էին Քրիստոսի տոհմաբանությունը։ Սարգիս Պիծակը հուշկապարիկների պատկերել է շարակնոցներում, իսկ հաջորդիվ կտեսնեք այդպիսի մեկ օրինակ (Պտկ. 14)։

Սարգիս Պիծակի կողմից ստեղծված շարակնոց (1322 թ.)։ Ինչպես 1312 թ. ավետարանում, այնպես էլ այստեղ, Սարգիս Պիծակը գլխազարդերից մեկի հարդարանքում պատկերել է հուշկապարիկների։ Նրանցից մեկը կանացի դիմագծեր ունի, իսկ մյուսը՝ տղամարդու։ Ուշադիր զննելով թագերը՝ կարող ենք տեսնել, որ դրանք նույնպես տարբերվում են իրարից։ Թագակիր սիրենները մուգ ֆոնի վրա ներկայացված են երեք քառորդով։ Մեկը մյուսից տարբերվում են փետուրների շքեղ գունազարդմամբ։ Փակ բերաններով հուշկապարիկները ներկայացված են դեմ դիմաց, նայում են վերև, առանձնանում են դեմքի հանդարտությամբ։ Ճակատազարդի ներքևի բացվածքում գրված է. «Կանոն մեծի պասեքին», իսկ ավելի ներքև գրված է. «Այս աւր յարետուի մեռելոց փեսայն անմահ և երկնաւոր. Քեզ աւետիմք բը խընդութե … հարսնի յերկրէ եկեղեցի. աւրհնեա ի ձայն ցընծութէ զաստուած քո սիովն….»։ Ամենայն հավանականությամբ հուշկապարիկներն այստեղ ավետում են Քրիստոսի հարությունը (Պտկ. 15)։

Ձեռագիր № 6289 (1323 թ., Գլաձորի վանք։ Ծաղկող՝ Թորոս Տարոնացի։ Կազմող՝ Իբրիանոս (1592 թ.)։ Ստացող՝ Եսայի վարժապետ (Նչեցի)) («Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի», 1970, հատոր Ա)։ Ավետարանում մասնավորապես շլացուցիչ են խորանները, որոնք փայլում են ոսկու առատությունից ու ներկերի պայծառությունից։ Բուսական զարդանախշերում կան զանազան տեսարաններ ու զարմանահրաշ էակներ (Դուռնովո, 1969, 208)։

Դրանց թվին է դասվում նաև հուշկապարիկ-սիրենի պատկերը։ Ինչպես այլ առասպելական թռչուններ, վերջինս նույնպես ներկայացված է գլխարկով, որոնք պալեոլոգյան տարազներ են հիշեցնում [Դուռնովո Լ. Ա., 1969, էջ 209]։ Թևերն արված են կապույտ գույնով, իսկ մարմինն ու գլխարկը՝ կարմիր։ Պատկերված է ուղղանկյուն խորանից դուրս՝ քիվի վրա, հայացքը շրջած է։ Խորանից դուրս՝ քիվի վրա պատկերված հուշկապրիկի տեսանք նաև Հաղբատի ավետարանում։ Վերջինս նույնպես գլխարկով էր։ Այս ավետարանում առասպելական կերպարի բերանը փակ է, իսկ դեմքը կատարված է մանրակրկտորեն (Պտկ. 16)։

Ձեռագիր № 7157 (Խազգիրք (Երաժշտական ձայնանիշ{ն}երու՝ նոթաներու գիրք), Սկևռա, 1349 թ., գրիչ՝ Գրիգոր քահանա Թահմիզյան, 1980, 118)։ Հուշկապարիկների պատկերներ տեսնում ենք կիսախորանի ճակատազարդում։ Տարբերվում է մյուս ձեռագրերում պատկերված սիրեններից, քանի որ կատարված է սև գույնով։ Սև գույնը ցույց է տալիս (Ադամի մուշտակը) և Աստծո խորհուրդը, որ ծածկվեց նրանից [Ղազարյան Վ., 2004, 91-93]։ Ոսկե խորքի վրա են սիրենները, իսկ ոսկին համապատասխանում է հինգերորդ էությանը՝ երկնքին։ Դիմագծերն ընդգծված չեն, այդ իսկ պատճառով այստեղ նույնպես չենք տեսնում՝ վերջիններիս բերանները բա՞ց են, թե՞ փակ, ինչպես Սարգիս Պիծակի 1312 թ. ավետարանում։ Շուրջբոլորը ծաղկային զարդանախշեր են։ Թագակիր հուշկապարիկների խմբին են պատկանում։ Նրանց միջև՝ մեդալիոնի մեջ, Քրիստոսի պատկերն է։ Ճակատազարդից ներքև գրված է. «Երգ գիշերային պաշտամանց հսկման»։ Թերևս այս գիշերային երգի հետ է կապվում հուշկապարիկներին սև գույնով պատկերելը։ Կարող ենք եզրակացնել, որ այստեղ վերջիններիս ներկայացումը կապվում է խազգրքի հետ, որպես քաղցր ձայնով էակների ու քրիստոնեական իրողություններ ավետելու մասին է վկայում նրանց պատկերումը Քրիստոսի կերպարի հարևանությամբ (Պտկ. 17)։

Ձեռագիր № 346 Մ. (Աստվածաշունչ, 1390-1400 թթ., Խիզան, նկարիչ Հովհաննես Խիզանցի։ Ստացող՝ Հովհաննես վարդապետ)։ Վասպուրականի մանրանկարչական դպրոցի յուրահատուկ ու յուրատիպ ոճն իր լավագույն արտահայտությունն է գտել Հովհաննես Խիզանցու արվեստում [Վասպուրականի հայկական մանրանկարչություն, 1978]։ № 346 ձեռագրում հուշկապարիկների հանդիպում ենք անվանաթերթի շքեղորեն զարդարված ճակատազարդում։ Թագակիր թռչունների մարմինները ուղղված են իրենց գլուխներին հակառակ, և նրանց հայացքները ուղղված են միմյանց միևնույն ուղղությամբ։ Մարմինները թանաքագույն են, իսկ թևերն ու թագը՝ բաց դեղնակարմրավուն։ Բերանները փակ են, իսկ այտերը կարմրություն ունեն։ Գլխազարդից ներքև՝ ամբողջ աջ եզրով, պատկերված է Ի տառը և գրված է. «Ի սկզբանէ արար ԱԾ(Աստուած) զերկին եւ զերկիր։ Եւ երկիր էր աներեւոյթ եւ անպատրաստ եւ խավարի վերա անդնդոց եւ հոգի ԱՅ(Աստուծոյ)»։ Այս ձեռագրում հուշկապարիկների գլխավոր գործառույթներից մեկը եղել է Աստծո կողմից երկրի ու երկնքի արարման մասին ավետելը (Պտկ. 18)։

Ձեռագիր № 6305 (XIV-XV դդ., Տաթևի վանք, գրիչ և ծաղկող՝ Գրիգոր քահանա)։ Թագակիր հուշկապարիկների հանդիպում ենք Մատթեոսի ավետարանի անվանաթերթի ճակատազարդում։ Հուշկապարիկներին մանրանկարիչը պատկերել է մուգ կանաչ ֆոնի վրա, կարծես թռիչքի ընթացքում։ Սիրամարգին հիշեցնող պոչեր ունեն և քառաթև են։ Թագն ու իջեցրած թևերը կարմիր գույն ունեն, վեր բարձրացրած թևերը՝ կանաչ, իսկ մարմինը՝ տարբեր երանգներ։ Սիրենները

ներկայացված են դեմ դիմաց՝ իրար նայելիս, փակ բերաններով ու այտերի բնորոշ կարմրությամբ: Ճակատազարդից ներքև վեղար հիշեցնող բացվածքում հիշատակվում է. «Աւետարան ըստ Մաթիոսի»: Իսկ ճակատազարդից ներքև գրված է. «Գիրք ծննդեան ՅՐ(Յիսուսի) ՔԻ(Քրիստոսի) որդ….»: Ինչպես № 1949 և № 4820 ձեռագրերում, այնպես էլ այստեղ, եզրակացնում ենք, որ հուշկապարիկների դերը եղել է Քրիստոսի տոհմաբանության ավետումը (Պտկ. 19):

Հուշկապարիկ-սիրենների պատկերների հանդիպում ենք նաև տերունական տեսարաններում, օրինակ՝ Թարգմանչաց ավետարանում և 1262 թ. Սեբաստիայի ավետարանում (Բալթիմոր, Ուոլթերս պատկերասրահ, ձեռ. 539 [Ավետիսյան Ք., 2007, Ը 49]:

Թարգմանչաց ավետարան (Գրիգոր Ծաղկող, 1232 թ., Մատ. ձեռ. № 2743: Գրիչ՝ Տիրացու, ծաղկող՝ Գրիգոր, ստացող՝ ոմն Խաչիկի որդի «աստվածազարդ քահանա» Հովհաննես): Թարգմանչաց ավետարանի ձևավորումները յուրատեսակ կապող օղակ են XII ու XIII դարերի մանրանկարների միջև [Չուգասզյան Լ. Բ, 1986, 114]: Մանրանկարներից մեկը ներկայացնում է Տիրամոր ննջի տեսարանը, որի վերին մասը պսակվում է եռաբաժին կամարով՝ հավանաբար խորհրդանշելով երկնային միստիկ արքայության սահմանը: Կամարի ու պատկերի շրջանակի միջև՝ վերի անկյուններում, ներկայացված են երկու, այսպես կոչված, սիրեններ՝ մարդադեմ թռչուններ (յուրաքանչյուր կողմից մեկական) [Չուգասզյան Լ. Բ, 1986, 79-82]: Այս մանրանկարում պատկերված հուշկապարիկները նայում են հակառակ ուղղություններով, բերանները փակ են, դեմքը՝ հանդարտ: Մարմինը բաց վարդագույնով է արված, իսկ թևերը՝ սև: Ներկայացված են գլխաբոբիկ: Հաշվի առնելով այն փաստը, որ հուշկապարիկ-սիրեններին պատկերում էին ավետման մասին հաղորդող տեքստերի հարևանությամբ, կարելի է ենթադրել, որ այստեղ նրանք ավետում էին Տիրամոր տեղափոխումը երկինք:

Այսպիսով՝ կարող ենք ասել, որ հայ մանրանկարչության մեջ հուշկապարիկների պատկերումը ունեցել է մեկ գլխավոր նպատակ՝ ցույց տալ, որ քրիստոնեության ընդունումից հետո չար ոգիներն անգամ սրբագործվել են՝ ստանալովնոր դեր ու նշանակություն: Հավանական է, որ եթե քրիստոնեության ընդունումից առաջ սպանում էին մարդկանց, ապա քրիստոնեական շրջանում իրենց դյութիչ ձայնով ավետում էին քրիստոնեական իրողություններն ու հավատքը: Մանրանկարիչների համար որպես հիմք ծառայել է դիցաբանությունը, և իմաստային առումով ենթարկելով փոփոխությունների՝ վերջիններս սկսել են այդ խառնակ կերպարներին պատկերել հայ մանրանկարչության մեջ: Իսկ խորանների հարդարման գեղարվեստական ավանդույթն ու քրիստոնեական ճարտարապետությունը կառուցված են առնվազն մեկ ընդհանուր սկզբունքի վրա. երկուսն էլ պարունակում են խորհրդանշական բազմաթիվ տարրեր, որոնց ըմբռնումը, վերլուծականից բացի, հաճախ նաև հայեցողական մոտեցում է պահանջում [Ամիրխանյան Ռ., էջ 157], (Պտկ. 20):

Սիրեն-հուշկապարիկների պատկերները լուսանցազարդերում: Ձեռագրերի ձևավորման մեջ կարևոր տեղ են զբաղեցնում նաև լուսանցազարդերը: Հայկական ավետարաններում հաճախ ենք հանդիպում զանազան լուսանցազարդերի, որոնք ձևավորված են տարբեր պատկերներով, որոնցից յուրաքանչյուրն ունի իր ուրույն իմաստը կամ պարզապես դեկորատիվ հարդարանք է: Միջնադարյան մանրանկարչության մեջ առանձնակի նշանակություն ստացած լուսանցազարդերում

XII դարի վերջերից սկսել են պատկերել մարդակերպ կերպարային ու սյուժետային տարրեր։ Ունենալով հստակ գործառական նպատակ՝ դրանք ստացել են գեղարվեստական միավորի արժեք՝ միավորելով ձեռագիր ավետարանների գեղարվեստական մանրամասները մեկ ամբողջության մեջ [Манукян С., 2008, 19-20]։ Հայկական ձեռագրերի լուսանցազարդերում նույնպես հանդիպում ենք առասպելական կենդանիների ու թռչունների պատկերների, որոնք յուրահատուկ գեղեցկություն են հաղորդում յուրաքանչյուր մանրանկարի։ Առանձնակի նշանակություն ունեն հուշկապարիկ-սիրենների պատկերները լուսանցազարդերում [Манукян С., 2008, 18-19]։

Ձեռագիր № 2952 (XII դար, թերթ 201ա)։ Լուսանցազարդերում պատկերված են բուսական զարդանախշեր, թռչնային պատկերներ, հուշկապարիկ, խաչ։ Մանրանկարի տեքստի աջ եզրին տեսնում ենք սրածայր թագանման գլխարկով հուշկապարիկի պատկեր։ Ձեռագրում բացակայում են վերջինիս դեմքի մանրամասները, փոքր-ինչ ընդգծված են աչքերը, քիթը։ Գլուխն ու ոտքերը կարմիր գույն ունեն, իսկ մարմինը՝ թանաքագույն։ Հատկանշական է, որ վերջինս պատկերված է Ղուկասի ավետարանի 3:1-6 տեքստի հարևանությամբ, որը հետևյալն է. «…Աստուծոյ խօսքն եղաւ Զաքարիայի որդի Յովհաննէսին անապատումը։ Եւ նա եկաւ Յորդանանի ամեն կողմերը, ապաշխարութեան մկրտութիւնը քարոզելով մեղքերի թողութեան համար. ինչպէս Եսայիա մարգարէի խօսքերի գրքումը գրուած է որ ասում է Կանչողի ձայնը անապատումը. պատրաստ արէք Տիրոջ ճանապարհը, եւ ուղիղ արէք նորա շաւիղները։ Ամեն ձոր լցուի, եւ ամեն սար եւ բլուր խոնարհուի. եւ դժուարները հեշտ լինեն, եւ խորտուբորտները հարթ ճանապարհներ լինեն. եւ ամէն մարմին Աստուծոյ փրկութիւնը կտեսնէ» [Աստուածաշունչ, 1158]։

Այսպիսի օրինակ մենք արդեն տեսանք Հռոմի ավետարանի խորաններից մեկում, որում ասվում է. «Պատրաստ արէք զճանապարհ տեառն և ուղիղ արարէք զշաւիղ ընսորա»։ Ինչպես գիտենք, հուշկապարիկները մինչքրիստոնեական ժամանակաշրջանում հրեշներ էին, դժոխքի կատաղածներ, որոնք դյութիչ ձայնով կանչում էին իրենց մոտ և սպանում մարդկանց։ Իսկ քրիստոնեական շրջանում հավանական է, որ այդ ձայնը ավետում էր Տիրոջ գալուստը, որը կարող ենք տեսնել նաև Հովհաննեսի [Աւետարան ըստ Հովհաննու, 1.19-28։ «….ես եմ անապատումը կանչողի ձայնը, թե ուղղեցէք Տիրոջ ճանապարհը, ինչպէս Եսայիա մարգարէն ասեց»], Մատթեոսի (Աւետարան ըստ Մատթեոսի, 3.1-12։ «Անապատումը կանչողի ձայնը. պատրաստ արէք Տիրոջ ճանապարհը, ուղիղ արէք նորա շաւիղները») և Մարկոսի (Աւետարան ըստ Մարկոսի, 1.1-8։ «…Ահա ես իմ հրեշտակն ուղարկում եմ քո երեսի առաջից, որ պատրաստէ Քո ճանապարհը քո առաջին. Կանչողի ձայնը անապատումը՝ պատրաստ արէք Տիրոջ ճանապարհը, եւ շիտակ արէք նորա Շաւիղները…) ավետարանների համապատասխան տեքստեր պարունակող էջերում։ Վստահաբար կարող ենք ասել, որ քրիստոնեական շրջանում հուշկապարիկ-սիրենները բարի խորհուրդ ունեին և իրենց քաղցր ձայնով ավետում էին քրիստոնեական իրադարձությունները, տվյալ դեպքում ողջունում էին Տիրոջ գալուստը, ճանապարհը (Պտկ. 21)։

1323 թ. ձեռագիր (Գլաձոր, նկարիչ՝ Թորոս Տարոնացի)։ Այս ձեռագրում հանդիպում ենք երկու հուշկապարիկի պատկերների, որոնցից մեկը գլխարկով է, որի վրա պատկերված է խաչ, իսկ մյուսի գլխին վառվող մոմ է։ Այս ձեռագրի մանրանկարներում հուշկապարիների պատկերները՝ խաչով ու մոմով, հաստատում են դրանց բարի խորհուրդ մարմնավորելը (Պտկ. 22)։

Լուսանցազարդ 1331 թ. Նորավանքում գրված ձեռագրում (№3, Գրիչներ՝ Մոմիկ, Պողոս, Հովհաննես (Mathews, 1994, 166-167)։ Մոմիկը 1307 թ. Հովհաննես Օրբելու հանձնարարությամբ Նորավանքում սկսել է այս ձեռագրի գրչությունը Բուրթել իշխանի համար։ Մատյանի գրչությունն ու ծաղկումն ավարտել են Հովհաննես գրիչն ու երիտասարդ շնորհալի նկարիչ Թորոս Տարոնացին (այդ մասին նշված է Մոմիկի գրած հիշատակարանում)։ Որոշ ժամանակ անց Մոմիկի տեսողությունը վերականգնվել է, և նա գրել է ձեռագրի հիշատակարանը) [Մաթևոսյան Կ., 2010, 64-66]։

Այս ձեռագրի լուսանցազարդերից մեկում ևս Թորոս Տարոնացին պատկերել է իր սիրելի կերպարին։ Մանրանկարի աջ անկյունում տեսնում ենք կանգնած հուշկապարիկի։ Ոսկեգույնով եզերված է ամբողջ կերպարը, որը նաև թագի հարդարանքի ու մարմնի պատկերման մեջ է կիրառվել։ Երկարամազ սիրենի թևերն արված են թանաքագույնով, իսկ ոտքերը՝ կարմիրով։ Թորոս Տարոնացու մոտ գրեթե միշտ սիրենները պատկերված են վառ և հատկապես կարմիր, կապույտ գույներով այն դեպքում, երբ մյուս մանրանկարիչների մոտ կարող ենք տեսնել անգամ սևի գործածություն։ Տարոնացին նաև ուշադրություն է դարձնում փետուրների, դիմագծերի մանրակրկիտ պատկերմանը, և նրա կերպարները գրեթե միշտ կանգնած են լինում պատվանդանի կամ խորանի քիվի վրա։ Այս ձեռագրում մանրանկարիչը թագը կարմիր գույնով է պատկերել, ինչից էլ դուրս է գալիս բուսական հարդարանքը։ Կարմիր թագով հուշկապարիկի պատկեր արդեն հանդիպեցինք Օշին Մարաջախտի ավետարանում (Պտկ. 23)։

Ձեռագիր № 5786 (1336 թ., թերթ 214ա, ծաղկող՝ Սարգիս Պիծակ)։ Տեքստի աջ անկյունում պատկերված է հուշկապարիկ, որի մազերը արևի ճառագայթների են նման։ Բերանը փակ է, նայում է տեքստին, մարմինը կանաչ գույնով է պատկերված, իսկ թևերը՝ կապույտ։ Պատկերի հարևանությամբ գտնվող տեքստը հետևյալն է. «Իսկ եթե դուք որ չարքդ էք գիտեք պարգևս բարիս տալ որդւոց ձերոց. ո՞ր չափ ևս առաւել հայր ձեր յերկնից տայցե բարիս այնոցիկ որ խնդրենն ի նմանէ։ Հանէր դև մի համր. և եղև յելանել դիւին խաւսեցաւ համրն; և զարմացան»։ Մանրանկարում տեսանք որ սիրենի պատկերը գտնվում է այն տեքստի հարևանությամբ, որում խոսվում է դևի մասին, որն Աստծուց խնդրում է խոսել, և Աստված տալիս է նրան այդ կարողությունը։ Կարելի է ենթադրել, որ խոսքը «քրիստոնեությունն է», որ տալիս է Աստված այդ էակին, և վերջինս, ընդունելով Աստծո խոսքը, բարի խորհուրդ է ձեռք բերում (Պտկ. 24)։

Աստվածաշունչ, ձեռագիր № 346 (1390-1400 թթ., գրիչ՝ Պետրոս աբեղա և Հովհաննես քահանա, Մելիքսեթ։ Նկարիչ՝ Հովհաննես։ Ստացող Հովհաննես Ռաբունի, կազմող՝ Ղարիպջան Արճիշեցի, Շմաւոն վրդ.)։ Ձեռագրի անվանաթերթերից մեկում արդեն հանդիպել ենք հուշկապարիկի պատկերների, որի մասին խոսեցինք վերևում։ Բացի անվանաթերթից՝ հուշկապարիկի պատկերների հանդիպում ենք նաև լուսանցազարդերում։ Մանրանկարի տեքստի ձախ անկյունում և՛ գլխով, և՛ մարմնով աջ շրջված թագապսակ հուշկապարիկը պատկերված է այտերի բնորոշ կարմրությամբ, գեղեցիկ պոչով։ Մարմինն ու պոչը մուգ կապույտ երանգներ ունեն, իսկ թագը, թևերն ու ոտքերը՝ կարմիր։ Նույն ձեռագրի մեկ այլ լուսանցազարդում պատկերված է լուսապսակով հուշկապարիկ, այդպիսի օրինակ մենք հանդիպեցինք 1304 թ. ավետարանում (Ձեռ. № 3722Մ.), (Պտկ. 25, 26)։

Այսպիսով՝ ուսումնասիրելով միջնադարյան մանրանկարչության մեջ՝ լուսանցազարդերում հանդիպող հուշկապարիկների պատկերները՝ կարող ենք ասել, որ մանրանկարիչները

պատահական տեքստերի հարևանությամբ չէին պատկերում այդ առասպելական էակներին։ Նրանք հիմնականում հայտնվում էին այն տեքստերի հարևանությամբ, որոնցում խոսվում է «կանչողի ձայնի» մասին, և այն տեքստերի, որոնցում խոսվում է դևերի մասին, որոնք Աստծուց խոսելու կարողություն են հայցում։ Այսինքն՝ քրիստոնեական շրջանում ընդունելով Աստծո խոսքը՝ մինչ այդ դև համարվող էակները ձեռք են բերում նոր իմաստ, իսկ դարերի ընթացքում այդ իմաստը պահվում և էլ ավելի է կատարելագործվում յուրաքանչյուր մանրանկարչի կողմից։

Եզրակացություն: Հուշկապարիկ-սիրենները ինքնատիպությամբ ու բնորոշ յուրօրինակ հատկանիշների շնորհիվ հայ միջնադարյան մանրանկարչության սիրելի թեմաներից են եղել։ Օժտված լինելով մեծ երևակայությամբ ու բարձր ճաշակով՝ միջնադարյան մանրանկարիչները դարերի ընթացքում զարգացրել ու կատարելագործել են այդ առասպելական կերպարների պատկերման ավանդույթները, և հայ մանրանկարչության մեջ վերջիններս ձեռք են բերել հայկական առանձնահատկություններ։

Ամփոփելով ասվածը՝ եզրակացնենք, որ մինչքրիստոնեական շրջանում դևերի, հրեշների, չար ոգիների իմաստ ունեցող հուշկապարիկ-սիրենները, որոնց մասին հիշատակվում է դիցաբանական լեգենդներում, քրիստոնեական շրջանում ձեռք են բերում լիովին նոր իմաստավորում։ Հուշկապարիկները հայտնի էին իրենց քաղցր ու դյութիչ ձայնով։ Հավանական է, որ եթե քրիստոնեության ընդունումից առաջ իրենց դյութիչ ձայնն օգտագործում էին մարդկանց գերելու ու սպանելու համար, ապա քրիստոնեական շրջանում իրենց դյութիչ ձայնով ավետում էին քրիստոնեական իրադարձությունները։ Այդ մասին են վկայում բազում օրինակներ, ինչպես նաև մանրանկարներում վերջիններիս բաց բերաններով պատկերելը։ Այդպիսի օրինակ մենք տեսանք Հռոմկլայի 1244 թ. ավետարանում։ Հուշկապարիկները ավետաբեր արարածներ էին, և նրանց գլխավոր գործառույթներից մեկը եղել է Աստծո կողմից երկրի ու երկնքի արարման մասին ավետելը։ Այդ մասին են վկայում համապատասխան տեքստի հարևանությամբ պատկերված լինելը։ Այդպիսի օրինակ մենք հանդիպեցինք №346 Մ. Աստվածաշնչում։ Հուշկապարիկներին՝ որպես քաղցր ձայնով էակների, պատկերել են նաև խազգրքերում, իսկ վերջինիս քրիստոնեական իրողություններ ավետելու մասին վկայում է պատկերումը Քրիստոսի կերպարի հարևանությամբ։ Ավելի ուշ խաչքարային հորինվածքներից մեկում (XVI դ.) վերջիններս պատկերվում էին Տիրամոր աջ ու ձախ կողմերում։ Մանրանկարչական այդպիսի օրինակ մենք արդեն տեսանք № 7157 Մ. ձեռագրում։ Հուշկապարիկի դերակատարումներից ևս մեկը եղել է Քրիստոսի հարության մասին ավետելը։ Այդ մասին է վկայում Սարգիս Պիծակի կողմից 1322 թ. շարակնոցում համապատասխան տեքստի հարևանությամբ պատկերված լինելը։ Ավետարաններում հաճախ ենք հանդիպում հուշկապարիկների պատկերների հետևյալ տեքստի հարևանությամբ. «Գիրք ծննդեան ՅՐ(Յիսուսի) ՔԻ(Քրիստոսի) որդիոյ Դաւթի որդիոյ Աբրահամու։ Աբրահամ ծընաւ զիսահակ։ Իսահակ ծընաւ զյակովբ։ Յակովբ ծընաւ զյուդա և զեղբարս նորա….» [Ձեռ. №4820, №1949 Մ. և այլն]։ Այստեղից կարող ենք եզրակացնել, որ վերջիններս ավետում էին Քրիստոսի տոհմաբանությունը։ Եզակի օրինակ է Օշին Մարաջախտի Ավետարանի նվիրաբերման էջում պատկերված երկմարմին հուշկապարիկի պատկերը, որը հավանաբար կապված է «Քրիստոսի մեկ անձ երկու բնություն» բանաձևի հետ։

Պատկերելով երկու մարմիններ՝ մանրանկարիչը նկատի է ունեցել մարդկային ու աստվածային էությունները, իսկ մարդկային գլուխը, որն ունի թագի պատկեր, հավանաբար Քրիստոս Աստվածն է, որը շարժում է այդ երկու ուժերին: Թարգմանչաց ավետարանի «Տիրամոր նինջը» ներկայացնող տեսարանում հուշկապարիկների պատկերումը ևս մեկ անգամ հաստատում է այն տեսակետը, որ վերջիններս ավետաբեր էակներ էին և այստեղ ավետում էին Տիրամոր երկինք տեղափոխվելը: Հուշկապարիկի պատկերների հանդիպում ենք այն տեքստերի հարևանությամբ, որոնցում ասվում է. «Կանչողի ձայնը անապատումը՝ պատրաստ արեք տիրոջ ճանապարհը. և ուղիղ արարէք զշաւիղ ընսորա…»: Այս տեքստերի հարևանությամբ հուշկապարիկների պատկերներ հայտնվում են ոչ միայն խորաններում, այլ նաև լուսանցազարդերում: Այդպիսով կանչողի ձայնը քրիստոնեական շրջանում ավետում էր Քրիստոսի գալուստը և ճանապարհ բացում մարդկանց համար դեպի քրիստոնեական հավատքը: Այդպիսի օրինակ մենք արդեն տեսանք № 2952 Մ. ձեռագրում և Հռոմի ավետարանում: Ուսումնասիրված հուշկապարիկների պատկերների մեծամասնությունը կարմիր ու կապույտ են: Կարմիրը խորհրդանշում է Աստծու որդու զոհաբերած արյունը, անձնազոհությունը, իսկ կապույտը աստվածայինի, երկնքի, հավերժության գույնն է, համահունչ է խոնարհությանը, բարեպաշտությանը: Այնուամենայնիվ, նյութի ուսումնասիրությունը չենք կարող ավարտված համարել. դեռ շատ կան նոր ու չլուսաբանված ձեռագրեր հայ մանրանկարչության մեջ, որոնց մանրազնին վերլուծությունները կարող են լուսաբանել նաև հուշկապարիկ-սիրենների դերի ու նշանակության մասին հայ միջնադարյան արվեստում:

Նկ. 1. Հաղբատի ավետարան

Նկ. 2. Հռոմկլայի ավետարան

Նկ. 3. Գիրք ձեռնադրութեանց

Նկ. 4. Հռոմի ավետարան

Նկ. 5. Զեյթունի ավետարան

Նկ. 6. Կիլիկիայի ձեռագիր

Պտկ. 7. Օշին Մարաջախտի ավետարան

Պտկ.8 Ձեռ. № 1746

Պտկ. 9 Ձեռ. № 9422

Պտկ. 10. Ձեռ. № 4820

Պտկ. 11. Ձեռ., № 3722

Պտկ. 12, Ձեռ. №1917

Պտկ. 13. Ձեռ. №1917

Պտկ. 14. Ձեռ. №1949

Պտկ. 15 Սարգիս Պիծակի կողմից ստեղծված շարակնոց

Պտկ. 16. Ձեռ. № 6289

Պտկ. 17. Ձեռ. № 7157

Պտկ. 18. Ձեռ. № 346

Պտկ. 19. Ձեռ. № 6305



Պտկ. 20. Թարգմանչաց ավետարան

Պտկ. 21. Ձեռ. № 2952

Պտկ. 22. 1323 թվի ձեռագիր

Պտկ. 23. Լուսանցազարդ 1331 թ.



Պտկ. 24. Ձեռ. №5786

Պտկ. 25. Ձեռ. № 346

Պտկ. 26. Ձեռ. № 346

Գրականության ցանկ

Ամիրխանյան Ռ., «Խորան բառի ծագումնաբանական ասպեկտները Եվսեբիոսի համաձայնության աղյուսակների գեղարվեստական հարդարանքի համատեքստում», 157 էջ :

Ավետիսյան Ա. Ն., 1971, Հայկական մանրանկարչության Գլաձորի դպրոցը, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 87 էջ :

Ավետիսյան Ք., 2007, «Աստվածամոր ննջի» պատկերագրությունը հայ միջնադարյան արվեստում, Ը 49 էջ :

Աստուածաշունչ, Աւետարան ըստ Ղուկասու, Գլուխ Գ, Յովհաննեսի քարոզելը և մկրտելը։ Քրիստոսը մկրտվում է։ Նորա ազգաբանութիւնը, 1158 էջ :

Դուռնովո Լ. Ա., 1969, Հայկական մանրանկարչություն, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, էջ 208:

Թահմիզյան Ն., 1980, Նյութեր հայկական և ռուսական հոգևոր միջնադարյան երգարվեստների համեմատական ուսումնասիրության, «Բանբեր Մատենադարանի», Երևան, 118 էջ :

«Հայկական մանրանկարչութիւն», 2000, Մխիթարեան մատենադարան ձեռագրաց, Բ., Մխիթարեան հրատարակչություն, Վենետիկ Ս. Ղազար, 9-10 էջ :

«Հայկական մանրանկարչութիւն», 2000, Մխիթարեան մատենադարան ձեռագրաց, Բ, Մխիթարեան հրատարակչություն, Վենետիկ Ս. Ղազար, 29 էջ :

«Հայկական մանրանկարչություն», 2014, Մատենադարանի հավաքածու, Երևան, «Նաիրի», 66 էջ:

«Հայկական մանրանկարչություն», 2014, Մատենադարանի հավաքածու, Երևան, «Նաիրի»:

Հակոբյան Հ., 1989, Արցախ-Ուտիքի մանրանկաչական դպրոցի մի խումբ ձեռագրեր, Երևան, «Խորհրդային գրող», 135 էջ:

Ճանաշեան Մ., 1966, Հայկական մանրանկարչություն, Մխիթարեան մատենադարան ձեռագրաց Ա, 60-61 էջ:

Մաթևոսյան Կ., 2010, Մոմիկ, Երևան 64-66 էջ:

Մալխասեանց Ս., 1944, Հայերէն բացատրական բառարան, Երեւան, Հայկական ՍՍՌ պետական հրատարակչութիւն, 1567 էջ:

Չուգասզյան Լ. Բ., 1986, Գրիգոր ծաղկող, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 114 էջ:

Չուգասզյան Ս., 2014, Մ. Մաշտոցի անվան մատենադարանի թիվ 9422 ձեռագրի մանրանկարչությունը Միջերկրական ծովի արվեստի համատեքստում, սեղմագիր, Երևան, 1 էջ:

Վասպուրականի հայկական մանրանկարչություն, 1978, «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան:

Գ. Տաթևացի, 2020, «Գիրք հարցմանց», թարգմանությունը՝ Սուսաննա Գրիգորյանի, «Տիգրան Մեծ» հրատարակչություն, Երևան:

«Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի», 1970, հատոր Ա, Հայկական գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 627 էջ:

«Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի», 1970, հատոր Ա, Հայկական գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան:

Манукян С., 2008, Рубрикация в системе художествеенного оформления Армянских рукописных Евангелий, Автореферат, Ереван, с. 19-20.

Khandanian A., 1978, Le theme de la Sirène-oiseau dans l'enluminure des manuscrits arméniens, Atti del Primo Simposio Internazionale di Arte Armena (Bergamo 28-30 guigno 1975), San Lazzaro-Venezia, pp. 377-394.

''Manuscripts armeniens illustres…'', p. 110.

Mathews F., Thomas and Roger S. Wieck (1994), Treasures in Heaven Armenian illuminated Manuscripts, The Pierpont Morgan Library, New York, Princeton University Press, Pierpont Morgan library, pp. 193-194.